ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2018 թվականի N 288-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը և ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանին (հեռախոս՝ /0232/ 3-52-02):

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

28.06.2018թ., 16:35
ք.Աշտարակ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ղեկավարի
2018 թվականի հունիսի 28-ի N 288-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանում (այսուհետ՝ համայնքապետարան) ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակում է Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

2. Համայնքապետարանը հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց տվյալները տեղադրում է իր կայքէջում:

3. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները պատասխանատու անձի կողմից հաշվառվում են գրանցամատյանում (ձև N 1)՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս այն օրենքով սահմանված կարգով վերահասցեագրել է իրավասու մարմնին:

4. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման հաշվառման հերթական համարը.
2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.
4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.
6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.
7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
8) ազդարարի ստորագրությունը.
9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.
10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

5. Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում, իսկ փաստաթղթային տարբերակով վարման դեպքում՝ նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

6. Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:

7. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

Ձև N 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Ազդարարի ստորագրությունը	Գրանցամատյանը վարողի ստորագրությունը	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ղեկավարի
2018 թվականի հունիսի 28-ի N 288-Ա որոշման

ԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ:

3. Ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է Համայնքի ղեկավարի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով:

4. Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները:

5. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով.

4) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

5) անհրաժեշտության դեպքում՝ ազդարարին հնարավորության դեպքում տեղափոխում է այլ աշխատասենյակ.

6) ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները.

7) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ